«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականիսեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2020 թվականի N -------Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1334-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն **որոշում է.**

1. ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի՝ <<Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին >> N 1334-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 22- րդ կետում <<նախարարության իրականացրած տեսչական >> բառերը փոխարինել << հանրակրթության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրականացրած >> բառերով։
- 34-րդ կետում <<կրթության պետական տեսչության>> բառերը փոխարինել <<կրթության տեսչական մարմնի>> բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։